

նելու նորածին Յիսուսին: Այս մարդիկը աստղերը կը սերտեին եւ աստղաբաշխներ էին: Հերովդես թագաւոր կ'ապշի գանոնք տեսնելով: Անոնք Հերովդեսի ըսին թէ եկած էին նորածին թագաւորը տեսնելու: Այս լուրը լսելով Հերովդես կը զայրանայ: Ան բռնակալ մըն էր, կը մեռցներ առանց խղճահարութեան: Ան նոյնիսկ իր ընտանիքին անդամներէն սպանած էր, նկատելով, որ անոնք իր գահին կը սպառնային: Երբ ան Յիսուսի ծնունդին մասին լսեց իմաստուն մոգերուն ըսաւ. «*Գացէ՛ք եւ ինծի լուր բերէ՛ք թէ ո՛ր կը գտնուի նորածին արքան, որպէսզի ես ալ այցելեմ զինք*»:

Սակայն հրեշտակը յայտնեց մոգերուն, որ լուր չտան թագաւորին եւ տարբեր ճամբայով վերադարձան: Երբ Հերովդես եղելութիւնը իմացաւ, հրամայեց Բեթղեհեմի մէջ գտնուող երեք տարեկանէ վար եղող բոլոր մանուկները սպաննել: Սակայն Մարիամ եւ Յովսէփ հրեշտակի խօսքը մտիկ ընելով առին Յիսուս Մանուկը եւ գացին Եգիպտոս, ուր ապրեցան մինչեւ Հերովդեսի մահը:

Իսկ ի՞նչեր նուիրեցին իմաստուն մոգերը Յիսուս Մանուկին: Ոսկի, կնդրուկ եւ զմուռ:

Ի՞նչ տեսակի նուիրներ են ասոնք, որ մոգերը մանուկին բերին:

Անոնք ոսկի բերին մատնանշելով, թէ Ան թագաւոր մըն էր: Թագաւորներուն տրուած նուիր մըն էր այդ:

Կնդրուկ՝ որովհետեւ խունկը տաճարին մէջ կը գործածուէր բարձր քահանայապետներուն կողմէ, ցոյց տալով թէ Յիսուս պիտի ըլլար մեր բարձր քահանայապետը եւ Աստուծոյ առջեւ մեր ներկայացուցիչը:

Զմուռ՝ որովհետեւ մեռնող թագաւորներուն մարմինները անով կը զմռսէին, ցոյց տալով թէ Յիսուս պիտի մեռնէր եւ թաղուէր զմուռով:



ՅԻՍՈՒՍ ՄԱՆՈՒԿԻՆ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ՄՈԳԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Միրելի՛ «Կկու»ի ընթերցասեր բարեկամներ, Դուք ծանօթ էք Յիսուս Մանուկի ծննդեան պատմութեան, գիտէք նաեւ, որ իմաստուն մոգեր այցելութեան եկան նորածին թագաւորը տեսնելու: Զանոնք կը ճանչնանք, որպէս երեք մոգեր, սակայն Աստուծաշունչը երբեք չի յիշեր երեք թիւը: Միայն կը խօսի երեք նուիրներու մասին, որ անոնք բերին: Հաւանական է, որ անոնք երեք իմաստուն մոգերէն աւելի էին, որոնք Արեւելքէն եկան եւ աստղին հետեւելով Բեթղեհեմ հասան իրենց յարգանքը յայտ-



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՃ՝ ՌԻՅԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻԵՐՈՒՄԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՄԵՃ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇԻՇԵԱՆ

ԱՐԱԳԻԼԻՆ ԵՐԿԱՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ


Ձմրան սկիզբը արագիլը կը պատրաստուի լքելու հիւսիսային երկիրները եւ ձմեռը անցընելու տաք Ափրիկէի մէջ...
 Երբ ձմեռը կը մօտենայ, արագիլներուն ուտելիքը կը նուազի: Անոնց համար ժամանակն է երթալու դէպի արեւոտ Ափրիկէ, ուր ուտելիքը աւելի առատ է: Արագիլները, որոնք ընդհանրապէս զոյգերով կ'ապրին, կը խմբուին: Նոյնիսկ փոքրիկ արագիլները ճամբորդութեան կ'ընկերակցին:
 Արագիլները թռիչք կ'առնեն: Կը սկսի աւելի քան երեսուն օր տեւող ճամբորդութիւն մը: Ճամբան շատ դիւրին է, ուղիղ դէպի առջեւ: Օրուան ընթացքին արագիլները կը սաւառնին առանց ճիգի: Գետնէն բարձրացող տաք օդի հոսանքները զանոնք կը բշեն ու կը տանին: Գիշերը բոլորը գետին կ'իջնեն ուտելու եւ հանգստանալու համար:
 Ո՛ւժ: Հազարաւոր քիլոմէթրեր ճամբորդութենէ մը ետք, արագիլները վերջապէս կը հասնին Ափրիկէ: Հոն, ցուրտ ձմեռէն հեռու, անոնք դիւրութեամբ ուտելիք կը գտնեն՝ միջատներ, ձուկ կամ պզտիկ անասուններ: Անոնք իրենց ոյժը կը վերագտնեն:
 Գարնան չափահաս արագիլները կը պատրաստուին հիւսիս վերադառնալ: Հոն է, որ անոնք պիտի ածեն իրենց հաւկիթները: Այն փոքրիկ արագիլները, որոնք տակաւին ածելու տարիքի չեն հասած, քակի մը տարի Ափրիկէ պիտի մնան իրենց կարգին հիւսիս ճամբան բռնելէ առաջ:
 Գիտե՞՞ր, որ արագիլը կրնայ օրական 400 քմ. կտրել:



Կը սիրե՞ս ներկել: Ուրեմն, օ՛ն, գունաւոր մատիտներ բեր ու ներկե՛ հետեւեալ գոյներով:
 1.- Կարմիր, 2.- ճերմակ, 3.- կապոյտ, 4.- դեղին, 5.- կանաչ



Փորձե՛ գտնել ելքի ճամբան:



Թիւերը միացնելով ամբողջացո՛ւր պատկերը, ապա ներկե՛:



**ՊԱՏԱՍԻԱՆՆԻ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ**



Ինչո՞ւ մեր ակռաները կը ցաւին, երբ սառէ պաղպաղակ մը կը խածնենք.
Սանուկներուն ակռաներուն մակերեսին վրայի ակօսները շատ յստակ են եւ խորունկ: Այս ակօսները, որոնք կ'օգնեն ուտելիքները տրորելու, նուազ խորունկ են չափահասներուն մաշած ակռաներուն վրայ: Դետեաբար, երբ պղպտիկ մը սառէ պաղպաղակ մը կը խածնէ, ան կառչած կը մնայ այդ ակօսներուն մէջ: Պաղը կը թափանցէ ակռային ընդմէջէն եւ ապա կը հասնի անոր շիղերուն: Այս պատճառով մենք ցաւ կը զգանք:




Ինչո՞ւ Գանգուստանի բնակիչները կը լուացուին Գանգես գետին մէջ.

Գանգես օրհնեալ գետ մըն է, որ մեծ կարելորութիւն ունի հնդկներուն գլխաւոր կրօնին (հինտու) մէջ: Ամէն տարի միլիոնաւոր հինտուներ ուստազնացութեան կու գան աղօթելու եւ Գանգեսի մէջ լուացուելու համար: Անոնք գետին ջուրերուն մէջ կը թաթխեն իրենց մարմինը՝ հոգին մաքրելու համար:


Ո՞վ գտած է քարիւղը.

Քարիւղը մարդոց ծանօթ է շատ հին ժամանակներէ: Աշխարհի կարգ մը շրջաններու մէջ ինչպէս՝ Մերձաւոր Արեւելքի մէջ, անկապ կը հոսի գետնին մակերեսին վրայ եւ, հետեաբար, դիւրին է գայն գտնելը:

Դին ժամանակներու ժողովուրդները քարիւղը կը գործածէին լուսաւորելու կամ նաւերուն մարմինը ծեփելու համար:



**ԱՆՀԱՄԱՏԱԼԻ,
ԲԱՅՑ ԻՐԱՒ...**



* Կարգ մը ջղջիկներ կրնան ապրիլ մինչեւ 30 տարի:

* Զափահաս կատուները կը մլաւեն հաղորդակցելու համար միայն մարդոց հետ եւ ո՛չ ուրիշ կատուներու հետ:

* Միացեալ Նահանգներու Ուաշինկթըն քաղաքին մէջ գոյութիւն ունի նուագախումբ մը, որ եղանակներ կը նուագէ վիտո խաղերու միջոցով:

* Շերեփագիները՝ ճպուռի տեսակ, աշխարհի վրայ յայտնուեցան առաջին թռչուններէն 140 միլիոն տարիներ առաջ:

* Կարգ մը մասնագետներ կը հաստատեն, որ կատուները ընտելացած են առնուազն 8000 տարիներ առաջ Եգիպտոսի մէջ:

* Գոյութիւն ունի ծովամարի տեսակ մը, որ ունի 24 աչք:

* Հարիւրաւոր միլիոն տարիներ առաջ Անթարքթիքան կը գտնուէր հասարակածին մօտ:

* Ծովածիերը կրնան նոյն ատեն երկու տարբեր ուղղութիւններով նայիլ:

* Կարգ մը թելատներ շատ կը սիրեն փտած կաղամբի հոտը:



**ԱՉԳԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ
ՉԱԳՈՒԿՆԵՐՍ ԿԸ ԳԾԵՆ
ՈՒ ԿԸ ԳՐԵՆ**

Արինա Պօշկեգենեան
2. կարգ



Բարսի Արոյեան
7. կարգ



Յակոբ Հապոյեան
9. կարգ



Արմեն Հատտատ
7. կարգ



Լանա Համբարձումեան
2. կարգ



**ՆԱՄԱԿՆԵՐ
ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿԻՆ**

Իմ շատ սիրելի՛ Կաղանդ Պապա, ես անհամբեր քեզ կը սպասեմ, որ ինձի եւ իմ ընտանիքիս ուրախ կաղանդ մը պարգեւես: Կաղանդ Պապա ձիւներուն պաղերուն մէջէն շուտ եկո՛ւր եւ ինձի եւ եղբօրս աղուոր նուէրներով ուրախացո՛ւր:

Ես այս տարի 3-րդ կարգ եղայ, իմ տարիքիս յարմար գեղեցիկ նուէր մը բեր, բայց եղբօրս ալ չմոռնաս:
*Ալիսիա Գասապեան
9. կարգ*

Այս Նոր Տարուան սեմին կը մաղթեմ, որ 2018 տարին ըլլայ յոյսով եւ հաւատքով լեցուն, որպէսզի կարենանք մեր բոլոր երագները իրականացնել:

Թող աշխարհին եւ մեր հայ ժողովուրդին պարգեւէ սեր, բարութիւն, խաղաղութիւն եւ յաջողութիւն, փոքրիկներուն ուրախ եւ խաղաղ օրեր:
Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ:
*Վարուժան Թորոսեան
2. կարգ*

Սիրելի՛ Կաղանդ Պապա, ես անհամբեր կը սպասեմ, որ այս տարի եւս ներկայ գտնուիս մեր մէջ: Լսեցի որ դուն բարիներուն նուէրներ կը բերես:

Կաղանդ Պապա, ես ալ շատ բարի եմ, եւ քեզմէ կը ինկնէ, որ ինձի բերես անուշիկ պուպիկ մը: Անշուշտ մի՛ մոռնար բարի եւ աշխատասեր տղոց:
*Ռոզալին Պեննեան
9. կարգ*

Սիրելի՛ Ձմեռ Պապիկ, Շատ ուրախ եմ որ քեզ պիտի տեսնեմ, եւ ուրախ ժամանակ պիտի անցընեմ քեզի հետ: Շատ կը փափաքեի, որ այս տարի իմ հարազատներուս հետ տօնէի տանս եւ քաղաքիս մէջ: Կը մաղթեմ բոլոր մանուկներուն յաջողութիւն, առողջութիւն եւ փայլուն ապագայ:

Կը մաղթեմ ուսուցչուհիներուս յաջողութիւն:

Յուսամ բոլորին փափաքները կը կատարուին: Շնորհակալ եմ Կաղանդ Պապուկ:
*Լանա Համբարձումեան
2. կարգ*